

## ՎԵՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՅՈՒԴ ԽՈՇՍԱԿԱՆ

## ԹԵԿՆԱԾՈՒՅԻ

Ամիսներ առաջ այս հարցը դրուեց մամուլի մէջ և դրական պատասխան ընդունեց «Մշակի» կողմից։ Ըստութիւնների նախօրեակին ենք այժմ, և կարծես մոռացուած է այն, ոչ ոքի չի զբաղեցնում։ Չեն հաւատում, թէ լուրջ հետեանքի համեմ հնարաւոր է այդ հարցը նորից զորաթեցնելով։ Միւս կողմից ոչ թեմական ժողովներում, ոչ մասնաւոր խորհրդակցութեանց մէջ, ոչ մամուլի էջերում՝ զեռ ոչ մի տեղ չորս եպիսկոպոսների անուններ որոշ կերպով իրար կողքի չեն դրուած, որ նրանցից հայրապետական թեկնածուների քառանուն ցանկը կազմուէր, և հաղիւթէ էջմիածին աղեորուող պատգամաւորներից մէկի համար պարզ լինի և հաստատուն ոյդ ցանկը։ Իսկ այս անգամուայ ընտրութիւնը անցեալների նման չէ, երբ կարեւի էր լինում՝ նախօրօք համաձայնութեան գալ, իբրև երրորդ և չորրորդ թեկնածուներ անել այնպիսիններին, որոնք միայն ձեփի համար էին և գրեթէ բոլորից սե քուէ պիտի ստանոյին։ Վերջին օրերս տեղի ունեցած կարդագրութեան համաձայն գաղտնի քուէարկութիւն պիտի լինի, և այդ դէպքում թեկնածուներից իւրաքանչիւրը կարող է զանազան բարգութիւնների շնորհիւ առաւելագոյն քուէ սեանալ։ Պէտք է ուրեմն մեծ խնամքով կատարել սկզբից և եթ ոչ միայն առաջին և երկրորդ, այլ նաև բոլոր թեկնածուների ընտրութիւնը, պէտք է գոնէ այն պատգամաւորները, որոնք կուսակցական կամ անձնական շահով չեն առաջնորդւում և պատահականութեանց զո՞ն լինել չեն կամենում՝ աչքի առաջ ունենան առնուազն չորս այնպիսի արժանաւորագոյն եկեղեցականներ, որ ձախող դէպքում նրանց մէջ ամենից պակաս արժանաւորի ընտրութիւնն իսկ աղէտարեր զինի եկեղեցւոյ համար։ Արդ, ովքեր են այդ չորսը, և եթէ մինչև այժմ՝ չորս այդպիսի

անուն տալ փորձազները ստիպուած են եղել ի վերջոյ դոնէ մի վարդապետ մէջ բերել՝ հենց այդ պարագան միթէ բաւական չէ ցոյց տալու, որ վարդապետների թեկնածութեան խնդիրը շատ մեծ ուշադրութեան պէտք է առնուի Եւ զարմանալի է, որ այդ խնդիրը կամայ ակամայ յառաջ է գալիս Վերջին երկու տարուայ մէջ մի քանի առաջնորդական ընտրութիւններ եղան, և ամեն անգամ՝ գրեթէ ոչ մի եպիսկոպոսի անուն չէր յիշում, իբրև թեկնածուներ առաջարկուեցան և ընտրուեցան բացառապէս վարդապետներ, կնշանակէ ուրեմն, որ երբ ժողովութիւների ներկայացուցիչներն առիթ են ունեցել իրենք իրենց համար հովիւ որոշելու, եղած վարդապետներին աւելի արժանաւոր են համարել եպիսկոպոսական պատօնի համար, քան եղած եպիսկոպոսներին, բայց մի տարօրինակ թիւրիմացութեամբ նոյն վարդապետները համարուել են անարժան եպիսկոպոսական կոչման համար և մնացել են վարդապետ. միթէ այդ արգելք պիտի լինի նոցա անունը դնելու նոցանից պակաս արժանիքի տէր նկատուած եպիսկոպոսների շարքում՝ իբրև թեկնածու բարձրագոյն, եպիսկոպոսապետական իշխանութեան։ Կայ արգեօք այդպիսի արգելք եկեղեցու կանոնական տեսակէտից, կայ արգեօք այն կանոնադրութեան տեսակէտից, որով կառավարում է այժմ՝ մեր եկեղեցին Ռուսաստանի սահմաններում։ Հաստատապէս կըպատասխանենք — ոչ։

Վերցնենք ամենից առաջ եկեղեցու անցեալը, Մինչեւ է, գարու ոկիզը մեզ յայտնի չէ հայոց եկեղեցւոյ հայրապետներից ոչ մէկը, որ եպիսկոպոսութիւնից հայրապետական աթոռ բարձրացած լինի. ոմանց համար, ինչպէս Ա. Լուսաւորիչ, Մեծն ներսէս՝ գիտենք, որ աշխարհական վիճակից անմիջապէս ընտրուել են կաթուղիկոս, ուրիշները եղել են «երէց», «վարդապետ»։ Այդ համապատասխան էր բոլորովին նախնական եկեղեցու ըմբռուման, երբ եպիսկոպոսներն ընտրուում էին ցմահ և կապուած մնում իրենց աթոռի հետ. ընդհանրական հայ-

բապետն և Այրարատի եպիսկոպոս էր՝ եպիսկոպոսապետական իրաւունքներով։ Յաջորդ դարերում թէ եպիսկոպոսի և թէ մանաւանդ հայրապետի դիրքը փոխուեց. ժառանգական իրաւունքով այս կամ այն աթոռը բարձրանալու սովորութիւնը բոլորովին մոռացուեց. կաթուզիկոսական բարձր իշխանութիւնը ամենից աւելի դիրքունեցող եպիսկոպոսների ձգուման առարկան դարձան, բայց շատ յաճախ հայրապետներին ընտրուած տեսնում ենք կրկին վարդապետների շարքից. պատահում են նոյն իսկ բացառիկ դէպքեր, երբ եկեղեցին ծանր դրութիւնից հանելու համար մի աչքի ընկնող աշխարհականի են հրաւիրում Լուսուորչի ամոռի վրայ բազմելու, ինչպէս Զաքարիա Չափեցուն թ., դարում, Վահրամ-Գրիգոր Բ. Պահապատունուն Ժ. դարում 1441 թ.-ին երբ հայրապետական աթոռը Կիլիկիայից Ա. Էջմիածին փոխագրուեց, մեր եկեղեցու և աղդի նորագոյն պատմութեան համար անշափ մեծ նշանակութիւն ունեցող այդ փառաւոր ձեռնարկութեան հեղինակները վարդապետներ էին և կաթուզիկոս ընտրելով մի վարդապետի Խոր-վիրապի վանահայր Կիրակոս Վիրապեցուն, նորան յանձնեցին Մ. Աթոռը վերականգնելու հօգուբ

Խոկական վերանորոգութիւնը տեղի ունեցաւ Ժէ դարում կրկին վարդապետութիւնից կաթուզիկոսական աթոռ բարձրացած հայրապետների ձեռքով, և վարդապետ էր վերջապէս Ժ. դարու մեր ամենանշանաւոր հայրապետը— Սիմէնն Երեանցին, երբ Կաթուզիկոս ընտրուեց 1763 թուին։ Աւեմն սորանից մի դար առաջ նչ ոքի համար կասկածելի եղած չպէտք է լինի, որ հայ վարդապետը կարող է կաթուզիկոս ընտրուել Այդպիսի կասկածը անտեղի կլինէր, քանի որ գեռամենքի յիշողութեան մէջ կենդանի էին Հայոց եկեղեցւոյ աւանդական կարդերը, ամենքը դիտէին, թէ ինչպիսի մեծ գեր էին կատարել վարդապետները մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ, ինչպէս վարդապետ կոչումը կրել պարծանք էին համարել ոչ միայն եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, այլ նոյն իսկ կաթուզիկոսները։

ԱՌԴ, երբ այսպիսի պայմաններում Ռուսաց կայսեր հրամանով նոր կանոնադրութիւնն է կազմւում Հայոց եկեղեցւոյ վարչութեան համար և յատուկ պատռեէր է տըրւում, որ կանոնադրութիւնն ըստ ամենայնի համաձայն լինի նոյն եկեղեցւոյ աւանդական կարգերին, այդ պատռերով էլ կանոնադրութիւն մշակողները որոշում են, որ Հայոց կաթուղիկոսը պէտք է ընտրուի բարձրաստիճան եկեղեցականներից ։ Խոկապէս այդպիսի որոշում եղած է ոչ թէ բուն կանոնադրութեան (պալաժենիայի), այլ յետոյ Փոխարքայի կողմից տրուած մի հրահանդի մէջ։ Պալաժենիայի մէջ ոչ մի խօսք չկայ ոյն մասին, թէ ովքեր պիտի լինին և ինչ աստիճան ունենան կաթուղիկոսութեան թեկնածուները, կարող էին և իրաւունք քւնէին նոքա բարձրաստիճան համարել միոյն եպիսկոպոսներին ու արքեպիսկոպոսներին, երբ իրենց գրեթէ ժամանակակից Սիմէսն երեանցին վարդապետութիւնից էր կաթուղիկոս եղել. երբ իրենց ժամանակ և իրենցից առաջ ոչ միայն վարդապետներից պատրիարքներ էին ընտրուել կ. Պոլսում և Երուսաղէմում, այլ և վարդապետական աստիճանով մնացել պատրիարքական աթոռի վրայ, Կարող էին նոքա մանաւանդ բարձրաստիճան չհամարել ծայրադոյն վարդապետներին, որոնք միայն իրաւունք ունին վարդապետական գաւաղանի իշխանութիւն տալ, մինչդեռ եպիսկոպոսն խոկապէս չունի այդ իրաւունքը, եթէ առաջուց ծայրադոյն վարդապետութեան աստիճան չէ ստացել Կարող էին նոքա չիմանալ, որ Հայոց վարդապետները ընդհանուր ազգային-եկեղեցական ժողովներում քորեպիսկոպոսներից, երբեմն նաև եպիսկոպոսներից բարձր աթոռ են ունեցել, նոցանից առաջ ստորագրել ժողովական թղթերին, Ըստ մեզ անկարելի է այդ, և որ նոքա իմացել են, թէ ինչպիսի գիրք ունի վարդապետը Հայոց եկեղեցում և ըստ այնում որոշում արել՝ պարզ ապացոյց է այն, որ Ռուսահայոց եկեղեցական վարչութեան բարձրադոյն ատեանի՝ Ա. Էջմիածնի Սինօդի ութանդամներից չորս անպատճառ վարդապետներ պէտք է

լինին նոցա որոշմամբ։ Խիստ տարօրնակ չէ միթէ բարձրաւատիճան չհամարել այն վարդապետներին, որ ո՞նց ձեռքը նոքա իրաւունք էին տալիս քննելու և գատելու Ռուսակայ բոլոր առաջնորդներին՝ եպիսկոպոսներին և արքեպիսկոպոսներին։ Տարօրինակ չէր լինի, եթէ Ռուսաց կառավարութիւնն այժմ իբրև բարձրաստիճան ճանաչել չկամենար այն վարպետներին, որոնք կայսեր հրամանով Սինօդի անդամ են հաստատուած։ շատ դէպքերում առաջնորդ են հաստատուել և նոյն իսկ բաւական ժամանակ վարդապետական աստիճանով առաջնորդական աստիճանի մեջ եղել. թողնենք այն, որ Ռուսաստանից գուրս հայկական թեմերի մեծագոյն մասն այժմ վարդապետ առաջնորդներ ունի։

Խ՞նչ է հետեւոմ այս բոլորից. այն անշուշտ, որ ոչ մի հասկանալի և օրինական արգելք չկայ՝ վարդապետների բարձրաստիճան համարելու և հայրապետութեան թեկնածուների մէջ զնելու։ Իսկ ընդհակառակն ծանրակշիռ պատճառներ կան, որ վարդապետ թեկնածու ունենալը խիստ կարեոր և ցանկալի են դարձնում. ա) Գրեթէ ընդհանուրի ցանկութիւնն է, որ Մ. Աթոռի և եկեղեցական հաստատութեանց ներկայ քոյքայեալ վիճակում կաթողիկոս ընտրուի թարմ հասակում գտնուող, իւր մտաւոր ոյժերի կատարեալ տէր, ժամանակակից քաղաքակրթութեան բարձրութեան վրայ կանգնած, հեռու մօտիկը չափելու ընդունակ, եթէ կարելի է՝ պետական լեզուն և օրէնքներն իմացող, բարձր կրթութեան, լուսաւոր և ընդարձակ աշխարհայեցողութեան տէր մի եկեղեցական. իսկ այդպիսին կարելի է գտնել միայն Ռուսահայ վարդապետների մէջ. բ.) թէ Ռուսահայ և թէ նոյն իսկ Տաճկահայ վարդապետների մէջ կարելի է գըտնել այնպիսի թեկնածուներ, որոնց քառանուն ցանկի մէջ մոցնելով շատ կհեշտանայ այդ ցանկը կազմելը և էջմիածնի Գերագոյն ժողովը զերծ կմնայ այն ցաւալի պատահականութիւնից, որ առ ի չդոյէ լաւագունին կամ կուսակցական հաշիւների չնորհիւ մի ապիկար եպիսկոպոս քառանուն ցանկի մէջ մտնէ և նոյն իսկ երկրորդ կամ առաջին ընտրելի դառնայ։

Այդպիսի և նման տեսակէտներով կարեոր է, որ էջմիածնի Գերագոյն ժողովը վարդապետ թեկնածուներ առաջարկէ և թէ արգելը ու առարկութեան հանդիպի

կառավարութեան ներկայացուցիչների կողմից՝ նախ հեռագրով դիմէ Բարձրագոյն իշխանութեան, և դրական կամ բացասական պատասխան ստանալուց յետոյ միայն ձեռնարկէ ընտրութեան:

Ա. Ա. Խ. Ա. Թ. Ա. Խ.



## Մ Ա Տ Յ Ո Ռ Ա Թ Ա Խ

— Ամենապատիւ Տ. Տեղակալի առաջարկած Ախնօդի անդամացուներից հաստատուած են իրենց պաշտօնում Տ. Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս, Սահակ վարդապետ Ամատունի, Մեսրոպ վարդապետ Տ. Մովսիսեան և Մատէոս վարդապետ Մատթէոսեան:

— Կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւորներին պատշաճ ընդունելութիւն կատարելու համար կաղմուած է մի յանձնաժողով Տ. Ղեոնդ եպիսկոպոսի նախագահութեամբ և Տ. Մատթէոս վ. Մատթէոսեանի, Արիստակէս վարդապետ Զուլոյեանի, Խորէն վարդապետ Մուրագրէգեանի, պ. պ. Միհնաս Բերբերեանի և Կ. Մելիք-Շահնազարեանի անդամակցութեամբ:

— Մ. Աթոռի միաբանութեան կողմից կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւոր են Նշանակուած Տ. Տ. Մեսրոպ, Սուքիաս Գրիգորիս Արքեպիսկոպոսները, Բարդուղիմէոս, Ղեոնդ եպիսկոպոսները և Գրիգորիս ու Հմայեակ Արշարունի վարդապետները:

— Մայր Աթոռ են Ժամանել Տ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոսը՝ Տիխիսի առաջնորդը, Միկթար վարդապետ Աստրախանի Ժամանակաւոր կառավարիչը, Կարապետ Տ. Վարդապետ, Ատրպատականի Առաջնորդը, Մուշէ վարդապետ, Ե. Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմակալի կողմից կաթուղիկոսական ընտրութեան մասնակցելու համար:

— Կաթուղիկոսական ընտրութեան հոգեորական և աշխարհական պատգամաւորները հետզհետէ ժամանում են Մ. Աթոռ, Հետեւեալ համարում կտանք նրանց լիա-